

Միջանկյալ տոկոսագումարով ժամկետային ավանդ

Խնայեք և միաժամանակ ստացեք տոկոսագումարներ

ü Հաշվի անվճար բացում և սպասարկում¹

ü Արժույթն ընտրելու հնարավորություն

ժամկետային ավանդները հասանելի են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով կամ եվրոյով:

ü Մարման եղանակներ

Տոկոսագումարները վճարվում են ավանդի ժամկետի ընթացքում՝ ամսական կտրվածքով, իսկ մարման եղանակը կարող էք ընտրել Ձեր կարիքներին համապատասխան:

ü Նվազագույն գումարի պահանջ

ՀՀ դրամով ավանդի դեպքում նվազագույն գումարը կազմում է 100,000 ՀՀ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով կամ եվրոյով ավանդների համար՝ 500 եվրո/ԱՄՆ դոլար:

ü Ժամկետային ավանդի բացում ինտերնետային/մոբայլ բանկային ծառայության միջոցով Դուք կարող եք բացել ժամկետային ավանդը ինտերնետային/մոբայլ բանկային ծառայության միջոցով, եթե գրանցված եք այդ ծառայությանը:

ü Տոկոսադրույք

Տոկոսադրույքը կարող է տատանվել կախված ավանդի ժամկետից և արժույթից: Խնդրում ենք ծանոթանալ մեր ժամկետային ավանդների տոկոսադրույքներին: Արտարժույթով ավանդի տոկոսագումարը, համաձայն հաճախորդի կողմից տրամադրված համապատասխան հրահանգի, կարող է վճարվել այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, կամ ՀՀ դրամով:

ü Ավանդի վաղաժամկետ դադարեցում

Նվազագույնը մեկ ամիս հետո հաճախորդի պահանջով ավանդի վաղաժամկետ դադարեցման դեպքում ավանդի վճարվելիք տոկոսագումարը կվերահաշվարկվի ժամկետային ավանդի մեկ ամսվա համար կիրառելի տոկոսադրույքի համաձայն: Ավանդի ժամկետի ընթացքում հաճախորդին վճարված տոկոսագումարի և վերահաշվարկված տոկոսագումարի տարբերությունը ենթակա է նվազեցման ավանդի մայր գումարից:

Եթե հաճախորդն ավանդը դադարեցնում է ավանդի հաշվի բացման օրվանից մինչև մեկ ամիս ժամկետի ընթացքում, ապա վճարվում է դադարեցման պահին հաշվեգրված տոկոսագումարի մեկ հարյուրերորդականը: Եթե տոկոսագումարն արդեն վճարվել է, ապա այն ենթակա է դուրսգրման հիմնական գումարից: Ավանդի բացման ամսաթվից երկու ամիս հետո հաճախորդի պահանջով վաղաժամկետ դադարեցման դեպքում հաճախորդին վճարվող տոկոսագումարի հաշվարկման ներկայացուցչական օրինակ:

Ավանդի սկզբնական գումար	1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ	12 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	7%
Ավանդի վաղաժամկետ դադարեցման պահին մեկ ամսվա համար գործող տարեկան անվանական տոկոսադրույք	3%
Հաշվետու օրերի քանակ	365
Ավանդի բացման ամսաթիվ	01.03.2018
Ավանդի վերջնաժամկետ	01.03.2019

Հաշվարկված տոկոսագումար երկու ամսվա համար (7%) = 11,506.85

Տոկոսային եկամտից հարկ 10% = 11,506.85 x 10% = 1,150.68

Վճարված զուտ տոկոսագումար երկու ամսվա համար = 11,506.85 - 1,150.68 = 10,356.16

Վերահաշվարկված տոկոսագումար երկու ամսվա համար (3%) = 4,931.51

Տոկոսային եկամտից հարկ 10% = 4,931.51 x 10% = 493.15

Վճարվելիք զուտ տոկոսագումար = 4,931.51 – 493.15 = 4,438.36

Ավանդի մայր գումարից նվազեցվող գումար = 10,356.16 - 4,438.36 = 5,917.81

ü Երաշխավորված ավանդներ

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը՝ համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի երաշխավորում են բոլոր ավանդները՝ համապատասխան կիրառվող ժամկետներին և պայմաններին:

¹ Ժամկետային ավանդի հաշիվը բացվում է ՀՀ դրամով խնայողական/ընթացիկ հաշվի առկայության դեպքում:

Ժամկետային ավանդի տարեկան տոկոսադրույքներ¹

	Ամիս						
	3	6	9	12	18	24	36
ՀՀ դրամ	4.00%	5.00%	6.00%	7.00%	7.00%	7.50%	7.50%
ԱՄՆ դոլար	0.50%	1.00%	1.25%	1.50%	1.50%	1.50%	1.50%
Եվրո	0.25%	0.25%	0.25%	0.25%			

Վերը նշված տոկոսադրույքները անվանական են, իսկ ավանդից ստացված տոկոսագումարը ենթակա է հարկման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բանկը ավանդի դիմաց տոկոսների հաշվարկն իրականացնում է ավանդային հաշվում առկա ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա համար՝ 1/366 հարաբերակցությամբ):

Ժամկետային ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերություն

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք Դուք, եթե Ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով:

Միջանկյալ (ամսական) տոկոսագումարի վճարման դեպքում

	Ամիս						
	3	6	9	12	18	24	36
ՀՀ դրամ	4.07%	5.12%	6.17%	7.23%	7.23%	7.76%	7.76%
ԱՄՆ դոլար	0.50%	1.00%	1.26%	1.51%	1.51%	1.51%	1.51%
Եվրո	0.25%	0.25%	0.25%	0.25%			

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ելնելով հետևյալ բանաձևից՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1 + APY)^{(D_n/365)}$$

Որտեղ՝

A - ավանդի սկզբնական գումարն է:

n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:

N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:

K_n - ավանդի ներդրման պահին եւ/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի եւ/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:

D_n - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D1 = 0$:

¹ ՀՀ դրամով ժամկետային ավանդների տոկոսադրույքները գործում են 2018 թ.-ի մայիսի 29-ից:
 ԱՄՆ դոլարով ժամկետային ավանդների տոկոսադրույքները գործում են 2018 թ.-ի ապրիլի 01-ից:
 Եվրոյով ժամկետային ավանդների տոկոսադրույքները գործում են 2015 թ.-ի հոկտեմբերի 20-ից:

ՀՀ դրամից բացի ցանկացած այլ արժույթով բանկային հաշիվն ենթադրում է արտարժույթային ռիսկ կապված փոխարժեքի տատանումների հետ: Մասնավորապես, տվյալ արտարժույթի տատանումների դեպքում ՀՀ դրամով Ձեր գումարի համարժեքը կարող է փոփոխվել: